

Սահակ, վերջինս մանուկ հասակին վախճանած (1601էն յառաջ), եւ քոյրեր՝ Եղիսաբեթ եւ Շաղվարդ: Կը յիշէ եղբորորդի մ'ալ, անշուշտ Կիրակոսի զաւակը, Թարխան անուն, որ 1601ին «նորարողբոջ» էր. 1617ին անիկա «տէր Թումայ» անուամբ կը ներկայանայ. Հաւանորէն նոյն տէր Թումայն է, որ 1626ին «Մարտիրոս արքեպիսկոպոս Էջմիածնեցի, եղբորորդի տէր Աւետիս կաթողիկոսի¹¹» անունը եւ տիտղոսը կը կրէ:

Աւետիս իւր բնակութիւնն ունէր Էջմիածին: Ընտրուած է կաթողիկոսակից հաւանորէն 1594ին, Առաքել կաթողիկոսի մահէն ետքը: 1601ին ուղեւորեցաւ Կ. Պոլիս եւ վերադարձաւ Էջմիածին. հոս էր 1603ին: Ու՞ր կը գտնուէր արարատեան դաշտի բնակիչներու տեղահանութեան ժամանակ (1604). չգիտենք: 1613ին հրաւիրուեցաւ Երուսաղէմ ձեռնադրելու Գրիգոր Գանձակեցին Երուսաղէմի արքեպիսկոպոս. ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ Ապրիլ 5ին: Մովսէս վարդապետ զինքը Էջմիածին գիտէ 1615ին: Հաւանորէն քաղաքական եւ անտեսական ղժուարին սրայմաններէն խոյս տալով 1620ին առանձնա-

¹¹ Մարտիրոս արքեպիսկոպոս 1626ին ընկերացած էր Մելքիսեդէկ կաթողիկոսին, երբ անիկա արտասահման կը վախչէր. նոյն տարւոյն Դեկտ. 29ին Մելքիսեդէկի կոնդակին մէջ կը յիշուի ինքը իրբեւ վկայ նիկոզայոս արքեպիսկոպոսի ձեռնադրութեան ի Լվով. կոնդակին լատիներէն թարգմանութեան մէջ կ'ըսուի Rev. Martinus metropolitanus archiepiscopus Sanctae Ecimiazin, nepos Revissimi Avedic Patriarchae.